



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 312

ք. Արտաշատ

< 17 > 12 2003թ.

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1799-Ն որոշմամբ հաստատված Արարատի մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

հաստատել Արարատի մարզպետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների /Արարատի, Վեդու, Արտաշատի, Մասիսի/ կանոնադրությունները՝ համաձայն հավելվածներ NN 1,2,3,4:


ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատում եմ՝

Արարատի մարզպետ
Ա.Սարգսյան



«17» 2003թ.

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԵՆԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի Վերու սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը (այսուհետև՝ գործակալություն) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ սոցիալական աջակցության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:
2. Գործակալությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի համատեղ հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հաստատում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը:
3. Գործակալության լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
4. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Գործակալությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Գործակալությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և գործակալության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գործակալության նպատակները և խնդիրներն են՝
 - ա) գործակալության սպասարկման տարածքում բնակվող անապահով ընտանիքների և սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց հայտնաբերումը, հաշվառումը և սահմանված կարգով սոցիալական աջակցության տրամադրումը.
 - բ) սոցիալական աջակցության բնագավառի պետական կարգավորման գործառույթների իրականացման ապահովումը.
 - գ) սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումը:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) հայտնաբերում է անապահով ընտանիքներին և սահմանված կարգով նրանց հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.

բ) իրականացնում է աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կազմակերպման աշխատանքներ.

գ) մարզի, տվյալ տարածաշրջանի, գործակալության սպասարկման տարածքի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների մասնակցությունը.

դ) մարդասիրական օգնության ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում, տրամադրում համապատասխան մարմիններին և դրանց կազմակերպում.

ե) քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման համար հավասար հնարավորությունների ապահովում.

զ) սոցիալական աջակցության մատչելիության ապահովում և կողմնորոշվածություն դեպի սպասարկվողների անհատական պահանջմունքները.

է) աջակցել միջազգային եւ տեղական կազմակերպություններին կազմակերպելու անվճար սննդի ծառայություն.

ը) աջակցել անօթևան անձանց ժամանակավոր կացարան ապահովելու գործում.

թ) մասնակցել թափառաշրջիկության եւ մուրացկանության խնդիրների վերաբերյալ համապատասխան մարմինների կողմից ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժ) գործակալություն դիմած անձանց ապահովել նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ.

Ճա) իրականացնել խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում սպասարկվողներին ցուցաբերել հրատապ հոգեբանական օգնություն, առավել խորը մասնագիտական օգնության կարիքի դեպքում սպասարկվողներին ուղարկել այլ կազմակերպություններ, որտեղ կարող է ցուցաբերվել ավելի բարձրորակ մասնագիտական օգնություն.

Ճբ) հաշվառել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության տուն-ինտերնատներ ուղարկելու հարցով դիմած անձանց, ուսումնասիրել նրանց ընտանեկան ու նյութական պայմանները, աջակցել նրանց փաստաթղթերի ձեւակերպմանը եւ առաջարկություններ ներկայացնել ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն.

Ճգ) հաշվառել որդեգրման, խնամակալության և հոգաբարձության հարցերով համայնքներ դիմած անձանց, ուսումնասիրել նրանց ընտանեկան ու նյութական պայմանները, աջակցել նրանց փաստաթղթերի ձեւակերպմանը և առաջարկություններ ներկայացնել համայնքի համապատասխան հանձնաժողովին.

Ճդ) գործակալություն դիմած քաղաքացիներին անհատական ծածկագրերի հատկացման հետ կապված համապատասխան ծառայությունների և խորհրդատվության տրամադրում.

Ճե) հաշվառել կենտրոնի սպասարկման տարածքում բնակվող հաշմանդամներին և օժանդակել նրանց համար մշակված անհատական վերականգնողական ծրագրերի իրականացմանը.

Ճզ) փախստականների և միգրացիայի վարչության հետ փախստականներին սոցիալական աջակցություն ցուցաբերելում:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Գործակալությունը կառավարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը (այսուհետև՝ մարզպետը):

Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Իր գործունեության ընթացքում գործակալության պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, մարզպետարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Գործակալության պետը պատասխանատու է բնակչության սոցիալական աջակցության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի, ինչպես նաև դրանց օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանության համար:

11. Գործակալության պետը հաշվետու է Հայաստանի Հանրապետության մարզպետին, մարզպետի գործակալության գործունեությունը համակարգող համապատասխան տեղակալին, իսկ սոցիալական աջակցության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարին, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

12. Գործակալության պետը՝

ա) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների լուծման ու գործառնությունների իրականացման համար:

բ) առաջարկություններ է ներկայացնում օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի նպատակների և խնդիրների վերաբերյալ մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

գ) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ներքին հրամաններ և ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և գործակալության անունից, ինչպես նաև տալիս է գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում գործակալության աշխատողներին պաշտոնի նշակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ այդ աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

ե) մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

զ) ապահովում է մարզպետի կարգադրությունների և ցուցումների, ինչպես նաև մարզպետի համապատասխան տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

է) սահմանում է իր տեղակալի իրավասությունները:

ը) առաջարկություններ է ներկայացնում մարզպետին գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալության խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին:

թ) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

ժ) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում գործակալության պետի պարտականությունների կատարման հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

V. ԳՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է մարզպետարանի աշխատակազմը:


15. Գործակալությունը կարող է ունենալ (10 և ավելի հաստիք ունենալու դեպքում) կառուցվածքային ստորաբաժանումներ:

16. Գործակալության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, բացառությամբ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների:

17. Գործակալության վերակազմակերպման և դրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և իրավական այլ ակտերով:



Հաստատում են
Արարատի մարզպետ
Ռ.Սարգսյան



ԿԱՆՈՆԱՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԱՏԱՍԿԱԶՄԻ ԱՐՏԱՆՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի Արտաշատի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը (այսուհետև՝ գործակալություն) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ սոցիալական աջակցության բնագավառում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:
2. Գործակալությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի համատեղ հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հաստատում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը:
3. Գործակալության լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
4. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Գործակալությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել զույթային և անձնական ոչ զույթային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Գործակալությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և գործակալության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գործակալության նպատակները և խնդիրներն են՝
 - ա) գործակալության սպասարկման տարածքում բնակվող անապահով ընտանիքների և սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց հայտնաբերումը, հաշվառումը և սահմանված կարգով սոցիալական աջակցության տրամադրումը.
 - բ) սոցիալական աջակցության բնագավառի պետական կարգավորման գործառույթների իրականացման ապահովումը.
 - գ) սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումը:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՈՈՒՅԹՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) հայտնաբերում է անապահով ընտանիքներին և սահմանված կարգով նրանց հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.

բ) իրականացնում է աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կազմակերպման աշխատանքներ.

գ) մարզի, տվյալ տարածաշրջանի, գործակալության սպասարկման տարածքի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների մասնակցությունը.

դ) մարդասիրական օգնության ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում, տրամադրում համապատասխան մարմիններին և դրանց կազմակերպում.

ե) քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման համար հավասար հնարավորությունների ապահովում.

զ) սոցիալական աջակցության մատչելիության ապահովում և կողմնորոշվածություն դեպի սպասարկվողների անհատական պահանջմունքները.

է) աջակցել միջազգային եւ տեղական կազմակերպություններին կազմակերպելու անվճար սննդի ծառայություն.

ը) աջակցել անօթևան անձանց ժամանակավոր կացարան ապահովելու գործում.

թ) մասնակցել թափառաշրջիկության եւ մուրացկանության խնդիրների վերաբերյալ համապատասխան մարմինների կողմից ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժ) գործակալություն դիմած անձանց ապահովել նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ.

Ճա) իրականացնել խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում սպասարկվողներին ցուցաբերել հրատապ հոգեբանական օգնություն, առավել խորը մասնագիտական օգնության կարիքի դեպքում սպասարկվողներին ուղարկել այլ կազմակերպություններ, որտեղ կարող է ցուցաբերվել ավելի բարձրորակ մասնագիտական օգնություն.

Ճբ) հաշվառել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության տուն-ինտերնատներ ուղարկելու հարցով դիմած անձանց, ուսումնասիրել նրանց ընտանեկան ու նյութական պայմանները, աջակցել նրանց փաստաթղթերի ձեւակերպմանը եւ առաջարկություններ ներկայացնել ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն.

Ճգ) հաշվառել որդեգրման, խնամակալության և հոգաբարձության հարցերով համայնքներ դիմած անձանց, ուսումնասիրել նրանց ընտանեկան ու նյութական պայմանները, աջակցել նրանց փաստաթղթերի ձեւակերպմանը և առաջարկություններ ներկայացնել համայնքի համապատասխան հանձնաժողովին.

Ճդ) գործակալություն դիմած քաղաքացիներին անհատական ծածկագրերի հատկացման հետ կապված համապատասխան ծառայությունների և խորհրդատվության տրամադրում.

Ճե) հաշվառել կենտրոնի սպասարկման տարածքում բնակվող հաշմանդամներին և օժանդակել նրանց համար մշակված անհատական վերականգնողական ծրագրերի իրականացմանը.

Ճզ) փախստականների և միգրացիայի վարչության հետ փախստականներին սոցիալական աջակցություն ցուցաբերելում:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Գործակալությունը կառավարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը (այսուհետև՝ մարզպետը):

Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Իր գործունեության ընթացքում գործակալության պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, մարզպետարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Գործակալության պետը պատասխանատու է բնակչության սոցիալական աջակցության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի, ինչպես նաև դրանց օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանության համար:

11. Գործակալության պետը հաշվետու է Հայաստանի Հանրապետության մարզպետին, մարզպետի գործակալության գործունեությունը համակարգող համապատասխան տեղակալին, իսկ սոցիալական աջակցության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ «Սոցիալական ապահովության նախարարին, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

12. Գործակալության պետը

ա) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման համար:

բ) առաջարկություններ է ներկայացնում օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի նպատակների և խնդիրների վերաբերյալ մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

գ) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ներքին հրամաններ և ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և գործակալության անունից, ինչպես նաև տալիս է գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում գործակալության աշխատողներին պաշտոնի նշակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ այդ աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

ե) մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

զ) ապահովում է մարզպետի կարգադրությունների և ցուցումների, ինչպես նաև մարզպետի համապատասխան տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջարկանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

է) սահմանում է իր տեղակալի իրավասությունները:

ը) առաջարկություններ է ներկայացնում մարզպետին գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալության խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին:

թ) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

ժ) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում գործակալության պետի պարտականությունների կատարման հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:


Վ. ԳՐՈՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է մարզպետարանի աշխատակազմը:

15. Գործակալությունը կարող է ունենալ (10 և ավելի հաստիք ունենալու դեպքում) կառուցվածքային ստորաբաժանումներ:

16. Գործակալության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, բացառությամբ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների:

17. Գործակալության վերակազմակերպման և դրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և իրավական այլ ակտերով:



Արարատի մարզպետ
Ս. Սարգսյան

« 17 » 2003թ.

ԿԱՆՈՆԱՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՆԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայության Մասիսի տարածքային գործակալությունը (այսուհետև՝ գործակալություն) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ սոցիալական աջակցության բնագավառում հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:
2. Գործակալությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը:
3. Գործակալության լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
4. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Գործակալությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Գործակալությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և գործակալության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գործակալության նպատակները և խնդիրներն են՝
 - ա) գործակալության սպասարկման տարածքում բնակվող անապահով ընտանիքների և սոցիալական խոցելի խմբերին պատկանող անձանց հայտնաբերումը, հաշվառումը և սահմանված կարգով սոցիալական աջակցության տրամադրումը:
 - բ) սոցիալական աջակցության բնագավառի պետական կարգավորման գործառույթների իրականացման ապահովումը:
 - գ) սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումը:

III. ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՈՒՅՑՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) հայտնաբերում է անապահով ընտանիքներին և սահմանված կարգով նրանց հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում.

բ) իրականացնում է աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակումը և վճարման կազմակերպումը.

գ) մասնակցում է մարզի, գործակալության սպասարկման տարածքի, այդ տարածքի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.

դ) հավաքագրում է մարդասիրական օգնության ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, դրանք տրամադրում համապատասխան մարմիններին և կազմակերպում այդ ծրագրերի իրականացումը.

ե) ապահովում է քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և կողմնորոշվածություն դեպի սպասարկվողների անհատական պահանջմունքները.

զ) աջակցում է միջազգային եւ տեղական կազմակերպություններին՝ կազմակերպելու անվճար սննդի ծառայություն.

է) աջակցում է անօթևան անձանց ժամանակավոր կացարան ապահովելու գործում.

ը) մասնակցում է թափառաշրջիկության եւ մուրացկանության խնդիրների վերաբերյալ համապատասխան մարմինների կողմից ծրագրերի իրականացման աշխատանքներին.

թ) գործակալություն դիմած անձանց ապահովում է նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ, առավել խորը մասնագիտական օգնության կարիքի դեպքում նրանց կողմնորոշում այլ կազմակերպություններ, որտեղ կարող է ցուցաբերվել մասնագիտական օգնություն

ժ) հաշվառում է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության տուն-ինտերնատներ տեղավորվելու հարցով դիմած անձանց, ուսումնասիրում նրանց ընտանեկան ու նյութական պայմանները, աջակցում նրանց փաստաթղթերի ձևակերպմանը եւ եզրակացություն ներկայացնում Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն.

ժա) կազմում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած երեխաների կյանքի որակի նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և իրականացնում դրանք ինքնուրույն կամ համագործակցելով համապատասխան կրթական, բուժական կամ այլ կազմակերպությունների հետ.

ժբ) օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրում է առանց ծնողական խնամքի մնացած՝ բնակարանի կարիք ունեցող, երեխաների բնակարանային պայմանները.

ժգ) տրամադրում է գործակալություն դիմած քաղաքացիներին անհատական քարտերի հատկացման հետ կապված համապատասխան ծառայություններ և խորհրդատվություն.

ժդ) հաշվառում է գործակալության սպասարկման տարածքում բնակվող հաշմանդամներին և օժանդակում նրանց համար մշակված անհատական վերականգնողական ծրագրերի իրականացմանը.

ժե) իրականացնում է իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Գործակալությունը կառավարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը (այսուհետև՝ մարզպետ):

Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Իր գործունեության ընթացքում գործակալության պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, մարզպետարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Գործակալության պետը պատասխանատու է բնակչության սոցիալական աջակցության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի, ինչպես նաև դրանց օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանության համար:

11. Գործակալության պետը հաշվետու է մարզպետին, մարզպետի՝ գործակալության գործունեությունը համակարգող համապատասխան տեղակալին, իսկ սոցիալական աջակցության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարին, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

12. Գործակալության պետը

ա) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման համար:

բ) առաջարկություններ է ներկայացնում օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի նպատակների և խնդիրների վերաբերյալ մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

գ) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության և գործակալության անուից, ինչպես նաև տալիս է գործակալության անուից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) սահմանում է գործակալության աշխատակիցների տնային այցելությունների ժամանակացույցը, յուրաքանչյուր աշխատակցի սպասարկման տարածքը՝ ապահովելով հավասար ծանրաբեռնվածություն:

ե) իր իրավասության սահմաններում առաջարկություններ է ներկայացնում գործակալության աշխատողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ այդ աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

զ) մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության իրականացրած աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

է) ապահովում է մարզպետի կարգադրությունների և ցուցումների, ինչպես նաև մարզպետի համապատասխան տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին կամ նրա համապատասխան տեղակալին:

ը) սահմանում է իր տեղակալի իրավասությունները:

թ) առաջարկություններ է ներկայացնում մարզպետին գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալության խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին:

ժ) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

Ճա) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում գործակալության պետի պարտականությունների կատարման հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

V. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է մարզպետարանի աշխատակազմը:

15. Գործակալությունը կարող է ունենալ (10 և ավելի հաստիք ունենալու դեպքում) կառուցվածքային ստորաբաժանումներ:

16. Գործակալության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, բացառությամբ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների:

17. Գործակալության վերակազմակերպման և դրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և իրավական այլ ակտերով: